ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____/Ս. Դեղոյան/____ «31» Օգոստոս 2023 թ.

Կ.Տ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի մարզ — Մալաթիա-Սեբաստիա համայնքի համայնք

հ. 179 հիմնական դպրոցի ուսումնական հաստատության անվանումը, — 8բ դասարանի դասարանը

Արմենուհի Սիմոնի Նիգոյան

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

«2023 - 2024» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *(դասարանի ընդհանուր բնութագիրը)* 8բ դասարանում կա 29 սովորող՝ 13 տղա և 16 աղջիկ:Դասարանում ունենք 3 գերազանց սովորող և 11 հարվածայիններ,ովքեր ցուցաբերում են լավ վարք և բարձր առաջադիմություն:8բ դասարանում հավաքված են բարի,հոգատար,շնորհալի,լավ բնավորությամբ սովորողներ:Սովորողները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն:Մասնակցում են դպրոցի բոլոր միջոցառումներին:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Կազմակերպել աշխատանքներ, ուղղված սովորողների կարգապահությանը, լավ վարքի դրսևորմանը համագործակցելով սովորողների, ծնողների, ՄԿԱ և ՈՒԱ գծով տնօրենի տեղակալների և դպրոցի տնօրենի հետ:Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն սովորողների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար սովորողների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Սովորողների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

Ներգրավել սովորողներին տարբեր աշխատանքային և ուսումնական ոլորտներում, տարբեր միջոցառումներում:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Հայեցի դաստիարակության հիմքում հոգևոր դաստիարակությունն է:Կարևորելով «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան,ուշադրություն դարձնել և կազմակերպել ուխտագնացություն Հայաստանի տարբեր շրջաններում գտնվող եկեղեցիներ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն գեղագիտության և մշակույթային դաստիարակության հիմքերը դրվում են մշակույթային օջախներ հաճախելով:Շատ կարևորելով թատրոնների և պատկերասրահների դերը, հաճախակի կայցելենք այդպիսի օջախներ,նպատակ դնելով ճանաչել մշակույթի գործիչներին:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն Պետություն ունենալը,պետականություն ունենալը,յուրաքնչյուր ազգի համար շատ կարևոր է:Յուրաքանչյուր հայ,որ տարիքում էլ լինի,պիտի կարևորի պետության դերը,հպարտանա,որ հայ է և ունի հզոր մշակույթային անցյալ:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Կոփել միտքը շատ կարևոր է:Սակայն մարմնակրթությունը ևս կարևոր դեր ունի սովորողի կյանքում: Սովորողի կամքի կոփումը,նրա առաջ ապրելակերպը կարևոր է ինչպես ծնողների,այլ նաև դպրոցի և հայրենիքի համար:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Հարգանքը աշխատանքի հանդեպ դաստիարակվում է դեռ մանկապարտեզից:Դպրոցում կարևորը ուշադիր լինեն հագուստի,դասարանի մաքրության,պահպանել դպրոցի գույքը և ընդհանուր մաքրությունը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Սեր դեպի բնությունը դաստիարակելուց առաջ նախ պետք է կարևորել բնության դերը մեր կյանքում,մաքուր օդ և էկոլոգիապես մաքուր կենցաղ ունենալու համար նախ պետք է հարգանքով մոտենալ:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ Այս կապը ամրապնդում է հիմնականում ծնողների և ուսուցիչների համագործակցությունը:Հրավիրվում են ծնողական ժողովներ,աշխատանք է տարվում դժվար բնավորության գծեր ունեցող սովորողների ծնողների հետ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1-ին կիսամյակ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1-ին շաբաթ	Զրույց նվիրված գիտելիքի օրվան Դասարանի ավագի ընտրություն	01.09.2023	Դասղեկ և սովորողներ
2-րդ շաբաթ	Զրույց անձի գիտակցության զարգացման վերաբերյալ	07.09.2023	Դասղեկ և սովորողներ
3-րդ շաբաթ	«Անկախ հայկական պետություն» շարադրություն,բանաստեղծություն,երգ	14.09.2023	Դասղեկ և սովորողներ
4-րդ շաբաթ	Հայ զինվոր, խոնարվում եմ Քո առաջ Հուշ-ցերեկույթ նվիրված 44 օրյա պատերազմի հերոսներին	28.09.2023	Դասղեկ և սովորողներ
5-րդ շաբաթ	Փոքրիկ դաս-միջոցառում « Իմ ուսուցիչը արժանի է հարգանքի»	05.10.2023	Դասղեկ և սովորողներ
6-րդ շաբաթ	Իմ սիրելի քաղաքը «Էրեբունի-Երևան»տոնակատարություն	12.10.2023	Դասղեկ և սովորողներ
7-րդ շաբաթ	«Կարծրատիպեր և նախապաշարմունքներ» քննարկում	19.10.2023	Դասղեկ և սովորողներ
8-րդ շաբաթ	Մաքրության շաբաթ Մաքրել և կարգի բերել դասարանը	02 . 11.2023	Դասղեկ և սովորողներ
9-րդ շաբաթ	Պահպանենք մեր կանաչ մոլորակը << Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը>> Մաքրություն դպրոցի տարածքում	09.11.2023	Դասղեկ և սովորողներ
10-րդ շաբաթ	<< Սովորողների իրավունքները և պարտականությունները դպրոցում>> նպատակն է հստակեցնել սովորողների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները	16.11.2023	Դասղեկ և սովորողներ
11-րդ շաբաթ	Հարգենք միմյանց << Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ	23.11.2023	Դասղեկ և սովորողներ
12-րդ շաբաթ	Արդար,ազնիվ,օրինապաշտ սովորող	30.11.2023	Դասղեկ և սովորողներ
13-րդ շաբաթ	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները (դեկտեմբերի 7)	07.12.2023	Դասղեկ և սովորողներ
14-րդ շաբաթ	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության և դրանց կարևորության մասին	14.12.2023	Դասղեկ և սովորողներ
15-րդ շաբաթ	Տարեմուտի խոհեր. 1-ին կիսամյակի ամփոփում	21.12.2023	Դասղեկ և սովորողներ

2-րդ կիսամյակ

16-րդ շաբաթ	<< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները	11.01.2024	Դասղեկ և սովորողներ
17-րդ շաբաթ	<< Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	18.01.2024	Դասղեկ և սովորողներ
18-րդ շաբաթ	Հայոց բանակի օր	25.01.2024	Դասղեկ և սովորողներ
19-րդ շաբաթ	<< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները	01.02.2024	Դասղեկ և սովորողներ
20-րդ շաբաթ	Իմ նախասիրությունները	08.02.2024	Դասղեկ և սովորողներ
21-րդ շաբաթ	Գրքի արժեքը Նվիրիր գիրք	15.02.2024	Դասղեկ և սովորողներ
22-րդ շաբաթ	<<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես >> թեմայով զրույց Ձևավորել բազմակարծություն և աշխարհահայացք	22.02.2024	Դասղեկ և սովորողներ
23-րդ շաբաթ	Հայկական ավանդույթների մասին	29.02.2024	Դասղեկ և սովորողներ
24-րդ շաբաթ	Կանանց միջազգային օր	07.03.2024	Դասղեկ և սովորողներ
25-րդ շաբաթ	<< Լրատվամիջոցներ և կերպարներ >> թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների դերը	14.03.2024	Դասղեկ և սովորողներ
26-րդ շաբաթ	Ձատկի տոնը և իր խորհուրդը	21.03.2024	Դասղեկ և սովորողներ
27-րդ շաբաթ	<< Ապագայի ծառը >> խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները	04.11.2024	Դասղեկ և սովորողներ
28-րդ շաբաթ	<<Եթե ես լինեի ...>> թեմայով քննարկում: Նապատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները:	11.04.2024	Դասղեկ և սովորողներ
29-րդ շաբաթ	<< Գնահատվող մրցույթ >> սովորողները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները ,կկարողանան խմբում հաջողությունն ապահովել:	18.04.2024	Դասղեկ և սովորողներ
30-րդ շաբաթ	<< Հայոց Մեծ եղեռն >> սովորողներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը :Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն	25.04.2024	Դասղեկ և սովորողներ

31-րդ շաբաթ	<< Գնահատիր ինքդ քեզ >> նպատակն է արժևորել արժեհամակարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն	02.05.2024	Դասղեկ և սովորողներ
32-րդ շաբաթ	Հաղթանակի օր	09.05.2024	Դասղեկ և սովորողներ
33-րդ շաբաթ	<< Սպառողների իրավունքներ >> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները , որպես սպառողներ	16.05.2024	Դասղեկ և սովորողներ
34-րդ շաբաթ	2-րդ կիսամյակի ամփոփում	23.05.2024	Դասղեկ և սովորողներ